ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

28-ը հունվարի 2025թ.

ՈՒՂԵՐՁ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հունվարի 28-ը նորանկախ Հայաստանի Հանրապետության ամենափառավոր էջերից է. այսօր նշում ենք Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման տարեդարձը:

33 տարի հայոց բանակն անցել է զարգացման, հզորացման դժվարին ուղի, կերտել բացառիկ հաղթանակների էջեր, հաղթահարել բազում փորձություններ ու սադրանքներ: Հայոց բանակի կազմավորման շրջանում լինելով բարդ ու հաղթական գործողությունների մասնակից, ճանաչելով մեր բանակի ներուժն ու անկոտրում կամքը՝ վստահ եմ, հայկական բանակը ի զորու է հաղթահարել նաև այսօրվա մարտահրավերներն ու դժվարությունները:

Հայրենիքի պաշտպանության համար հայոց բանակը թանկ գին է վճարել, կրել անդառնալի մարդկային կորուստներ. առաջնահերթ անուն առ անուն ուզում եմ հիշենք և խոնարհումով հարգենք արցախյան պատեազմներում անձնվիրաբար կռված զինծառայողների, ազատամարտիկների, մարտերում նահատակված բոլոր հերոս հայորդիների հիշատակը:

Այսօր ևս ապրում ենք մարտահրավերներով լի, անորոշ ժամանակներ և մեր ժողովուրդը հայրենիքի պաշտպանության հարցում մեծապես շարունակում է ապավինել բանակի արիությանն ու նվիրյալ հայրենասիրությանը:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Հայոց բանակի օրվա առիթով շնորհավորում եմ բոլորիս. բանակը ազգային արժեք է, որին յուրաքանչյուր հայ կապված է հպարտության ու երախտիքի զգացումներով:

Հայկական բանակի հարգելի՛ ներկայացուցիչներ, զինծառայողներ.

Մասնագիտական տոնի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում եմ քաջառողջություն, զգոնություն, անվտանգ ու արդյունավետ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ